ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1 ☎ 0322-4-61-92

թիվ _____

____» _____ 2022 թ.

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ
ՊԱՐՈՆ Գ. ՍԱՆՈՍՅԱՆԻՆ

Ի պատասխան Ձեր 24.01.2022թ. թիվ ԳՍ/15.3/1545-2022 հանձնարարականի.

Հարգելի պարոն Սանոսյան

Ձեզ եմ ներկայացնում տեղեկատվություն ՀՀ կառավարության 13.07.2017թ. N30 արձանագրային որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2017-2021 թվականների ռազմավարական ծրագրի իրականացման միջոցառումների» ժամանակացույցի 1.1.5 «Տեղեկատվական բազայի տվյալների հիման վրա ՀՀ մարզպետարանների կողմից շուրջօրյա հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման ծրագրերի մշակում և իրականացում» կետի կատարման ընթացքի վերաբերյալ:

Առդիր՝ էլեկտրոնային նյութ:

27/01/2022

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Ի.Մարտիրոսյան
հեռ. (0322) 2-22-91

Տեղեկատվություն

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հաշվառման «Մանուկ» տեղեկատվական համակարգում ՀՀ Լոռու մարզից 2018-2020 թվականներին հաշվառվել է 390 երեխա: Այդ ժամանակահատվածում մարզպետարանի կողմից շուրջօրյա հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման ծրագրեր չեն մշակվել, սակայն մարզպետարանը «Առավոտ» ԲՀԿ-ի և «Բարի մամա» կազմակերպության հետ համատեղ կանխարգելել է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված շուրջ 147 երեխայի մուտքը հաստատություն:

2018 և 2019 թվականներին ՀՀ երեխաների շուրջօրյա խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման ծրագիրը Լոռու մարզում իրականացրել է «Առավոտ» ԲՀԿ-ն: 2018թվականին ընդգրկելով Լոռու մարզի 7 համայնքներից 55 երեխա, իսկ 2019թվականին՝ 57 երեխա: Ընտանիքները գտնվելով դժվարին իրադրության մեջ՝ երեխաները ունեին աջակցության կարիք:

2019 թվականին ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, հիմք ընդունելով «Մանուկ» տեղեկատվական համակարգում հաշվառված երեխաների տվյալները, որպես նոր նախաձեռնություն 2020 թվականի ՀՀ պետական բյուջեում ներառեց «Ընտանիքներին, կանանց և երեխաներին աջակցություն» ծրագրի «Կենսաբանական ընտանիք տեղափոխված և հաստատություն մուտքը կանխարգելված երեխաների ընտանիքների բնաիրային օգնության փաթեթի տրամադրում» միջոցառումը: Միջոցառման նպատակը ՀՀ Լոռու մարզի մասով 35 երեխայի մուտքը շուրջօրյա խնամքի հաստատություններ կանխարգելելն էր: Ծրագրի իրականացման համար հայտարարված մրցույթի արդյունքում դրամաշնորհ տրամադրվեց «Բարի մամա» կազմակերպությանը, որը վերոհիշյալ ծրագրի շրջանակներում աջակցություն է տրամադրել ՀՀ Լոռու մարզի կյանքի դժվարին իրավիճակում հայտնված և հաշմանդամություն ունեցող մինչև 18 տարեկան 35 երեխայի և նրանց ընտանիքներին: Աջակցությունը տրամադրվել է գնահատված կարիքներին համապատասխան, այդ երեխաներից 9-ը ունեին առողջական խնդիրներ: Արդյունքում բոլոր երեխաները մնացել են համայնքում: